ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ 60 ՏԱՐՈՒՄ

Տնտեսագիտության դոկտոր Վ. Ե. ԽՈՋԱԲԵԿՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և Հայաստանում սովետական կարգերի հաստատման շնորհիվ սկսվեց հայ ժողովրդի ազգային վերածննդի, սոցիալ-տնտեսական կյանքի մեծ վերափոխումների, նրա համակողմանի զարգացման ու ծաղկման դարաշրջանը։ Դա ամենից առաջ իր արտահայտությունը գտավ մայր հայրենիքում ժողովրդի անընդհատ աճի, բնակչության որակական մակարդակը բնութագրող խոր տեղաշարժերի մեջ։ Բավական է ասել, որ իմպերիալիստական և ազգամիջյան կոտորածներից ավերակների վերածված երկրից Սովետական Հայաստանը ժառանգեց ընդամենը 720 հազար մարդ։ 1913 թ. նրա այսօրվա տարածքում բնակվում էր ավելի քան 1 մլն մարդ։ Իսկ եթե դրան ավելացնենք Արևմտյան Հայաստանից և ցարական Ռուսաստանի նախկին հայկական մարզերից արտագաղթած գաղթականությունը, որ ողողել էր ոչ միայն Արևելյան Հայաստանը, այլև ամբողջ Կովկասն ու Ղրիմը, իրավիճակն ավելի պարզ կդառնա։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Արևելյան Հայաստան գաղթած բնակչության ստույգ թիվը պարզված չէ։ Հրատարակված և արխիվային տվյալները վիճակագրական աղքատիկ նյութերի հիման վրա կատարված մոտավոր ու զգույշ հաշվարկներ են։ Այնուամենայնիվ, գրանք թեև ոչ լրիվ, բայց որոշ պատկերացում են տալիս Արևելյան Հայաստան ներգաղթած և այնտեղից արտագաղթած բնակչության թվի ու նրա ազգային կազմի մասին։ Առանձին տվյալներով, միայն Թուրքիայից Արևելյան Հայաստան ներգաղթողների ընդհանուր թիվն ընդունվում է մինչև 500 հազար։ 1918—1920 թթ. Անդրկովկասում իմպերիալիստական պատերազմի արհավիրքներին ավելացան Անդրկովկասի բուրժուազգայնական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականության հետևանքը հանդիսացող ազգամիջյան ընդհարումներն ու ջարդերը։

Արևելյան Հայաստանը, որ համաշխարհային պատերազմի տարիներին պատսպարեց Արևմտյան Հայաստանից արտագաղթած հայ, հույն, ասորի բնակչության մեծ զանգվածների, հետագայում ինքը ևս արտագաղթի օջախ դարձավ։ Իմպերիալիստական պատերազմից կիսավեր դարձած փոքրիկ երկիրը՝ վերածվելով ազգամիջյան կռիվների ասպարեզի, ավելի ու ավելի քայքայվեց ու ընկրկեց գաղթականական հորդացող ալիքի առջև։ Թուրքական կորքերի ու սովի հետապնդումներից դրդված գաղթականական հոսանքն իր համար ճանապարհ բացեց դեպի Հյուսիս։ Մասնավորապես հայ, հույն և ասորի գաղթականների հոծ զանգվածները Վրաստանի վրայով շարժվեցին դեպի Հյուսիսային Կովկաս, մասամբ՝ Ուկրաինա։ Նրանցից շատերը փրկություն գտան Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերում, Դոնի տափաստաններում և Ղրիմում։

Հասկանալի է, որ նման պայմաններում խոսք չէր կարող լինել բնակչության աճի մասին։ Հայաստանում 1914—1920 թթ. բնակչության ծննդի խիստ անկումն ուղեկցվեց մահացության բարձրացումով։ 1919 թ. Ալեքսանդրապոլում մահացածների ավելի քան 30 տոկոսը զոհ էր գնացել համաճարակին, 20,6 տոկոսը՝ այլ վարակիչ, իսկ մոտ 21 տոկոսը՝ մանկական հիվանդություններին[1] և այլն։ Միայն մեկ տարվա՝ 1919 թ. ընթացքում Երևան քաղաքում մահացել է բնակչության 20—25 տոկոսը[2]։

Վիճակագիր Զ. Կորկոտյանի մոտավոր հաշվարկներով, 1914—1919 թթ. Հայկական ՍՍՀ ներկայիս տարածքում բնակչությունը նվազել է ավելի քան 600 հազարով, որոնց մեծ մասն ընկել է պատերազմի դաշտում, դարձել սովի ու համաճարակի զոհ, մի մասն էլ արտագաղթել է[3]։

Ահա յուրատեսակ մի վիճակ. մի կողմից զանգվածային ներգաղթը, իսկ մյուս կողմից՝ արտագաղթ, մահացություն և ծննդաբերության մակարդակի խիստ անկումը։ Վճռական էին վերջին հանգամանքները, որոնց պատճառով նույնիսկ գաղթականական հոծ զանգվածների առկայության պայմաններում Արևելյան Հայաստանի բնակչությունը խիստ նվազեց։

Հայաստանում սովետական իշխանության առաջին տարիներին բնակչության վերարտադրության բնորոշ առանձնահատկություններից մեկը տարագիր հայերի համահավաքն էր։ Չնայած միջոցների սղությանը, Հայաստանի սովետական իշխանությունը դիմեց հնարավոր միջոցների՝ գաղթականների հոծ զանգվածներին ապաստան տալու և նրանց նոր կյանքի շինարարությանը մասնակից դարձնելու համար։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումով սկիզբ առավ դեպի Հայաստան ներգաղթի տևական և գնալով ուժեղացող շարժումը։

1920 թ. դեկտեմբերից մինչև 1921 թ. վերջը ստույգ հաշվարկ չէր կատարվում, այնպես որ այսօր անհնար է ճշգրիտ թվեր վկայակոչել։ Արխիվային վավերաթղթերից մեկում հիշատակվում է, որ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո, ընդամենը մի քանի ամսվա ընթացքում հարևան հանրապետություններից և Պարսկաստանից Հայաստան են վերադարձել ու իրենց կիսավեր գյուղերում տեղավորվել հարյուրհազարավոր մարդիկ։ 1921 թ. կեսերից հանրապետության ժողտնտխորհը ձեռնարկում է բոլոր միջոցները՝ հարևան հանրապետություններից Սովետական Հայաստան կատարվող ներգաղթին կազմակերպված բնույթ տալու համար։ Պետք է նշել, որ բնակչության վերաբնակեցումը համապետական գործ էր։ Այն ուղղություն և ընթացք էր ստանում միութենական կենտգործկոմի և ամեն մի ազգային հանրապետության կենտգործկոմի ու ժողկոմխորհի որոշումների հիման վրա։ Երկրի ներսում բնակչության շարժումը նախապես մշակված պլանով իրականացնելու, ինչպես նաև այդ գծով ժողկոմխորհի և կենտգործկոմի որոշումները կենսագործելու նպատակով ՆԳԺԿ-ին կից ստեղծվում են կենտրոնական էվակուացման բաժիններ (ЦЕНТРЭвак)։ Համանման բաժիններ են ստեղծվում բոլոր հանրապետություններում, այդ թվում նաև Կովկասի ու Անդրկովկասի մասշ-

---

[1] Տե՛ս Զ. Կորկոտյան, Ձերմակ ջարդից դեպի կարմիր շինարարություն, Երևան, 1929, էջ 38։

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 32։

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 39։

տարով։ Հայաստանում ՆԳԺԿ-ին կից էվակուացման բաժին ստեղծվում է 1922 թ. հունվարին[4]։

Հիմնադրվում է նաև բնակչության վերաբնակեցման հայկական հանձնաժողով, որը հանդես է գալիս որպես ՌՍՖՍՀ կառավարության օրգան։ Նա իր գործունեությամբ հաշվետու էր Կովկասի կենտրոնական էվակուացման հատուկ լիազորության վարչությանը և Հայաստանի հեղկոմին։ Հանձնաժողովը իրեն տրված լիազորություններին համապատասխան անմիջականորեն ղեկավարում էր Հայաստանի սահմաններում գաղթականների և բնակչության այլ տարրերի միավորման, տեղափոխության և սպասարկման գործը[5]։

Անդրկովկասում մեկ հանրապետությունից մյուսը, ինչպես և նրա սահմաններից դուրս կատարվող տեղափոխությունները անդրկովկասյան կենտրոնական էվակուացիոն մարմինների համաձայնությամբ իրականացնում էին հանրապետությունների էվակուացիոն մարմինները[6]։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին երկու-երեք տարիներին ներգաղթի մյուս հոսանքը գալիս էր Հյուսիսային Կովկասից[7]։ Այստեղ ապաստանել էին ոչ միայն Արևմտյան Հայաստանի հայ և հույն գաղթականները, այլև Արևելյան Հայաստանից, մասնավորապես Կարսից, Ալեքսանդրապոլից և Նախիջևանի գավառներից արտագաղթած բնակչությունը։ Հյուսիսային Կովկասից Հայաստան վերադառնում էին գլխավորապես Արևելյան Հայաստանի նախկին բնակիչները։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո հենց առաջին ամիսներից բնորոշ է դառնում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին աշխարհով մեկ սփռված տարագիր հայերի ներգաղթը մայր հայրենիք։

Արդեն 1922 թ. արտասահմանից, գլխավորապես Միջագետքից, մասամբ Պարսկաստանից, ինչպես նաև ՌՍՖՍՀ-ից ներգաղթածների թիվը կազմել է 9192 մարդ[8]։ Նրանք գլխավորապես տեղավորվել են Ախտայի, Վեդիբասարի, Ղամարլուի, Բաշ Գառնու, Ղուրդիղուլու, Բասարգեչարի շրջաններում[9]։ Մինչև 1925 թ. ներգաղթողների թիվը հասնում է 16943-ի[10]։ 1922—1929 թթ. արտասահմանից հայրենիք վերադարձան 20,3 հազար հայեր[11]։

ՀՍՍՀ բնակչության աճի այս միտումը պահպանվեց նաև 30-ական թթ.։ Ներգաղթն արտասահմանից հատկապես մեծ մասշտաբներ ընդունեց 1934—1936 թթ.։ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից սկսած մինչև 1940 թ. հայրենադարձ հայերի ընդհանուր թիվը հասավ շուրջ 75 հազարի[12], այսինքն 1926 թ. մարդահամարից մինչև 1939 թ. մարդահամարն ընկած ժամանակաշրջանում հանրապետությունում ավելացած բնակչության ավելի քան 10 տոկոսը հայրենադարձներ էին։ 1920-ական թթ. կեսերից սկսած Հայաս-

---

4 Տե՛ս նույն տեղում, գ. 11, թ. 1։

5 Տե՛ս նույն տեղում, գ. 42, թ. 45։

6 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 7, թ. 13։

7 Տե՛ս նույն տեղում, գ. 6, թ. 28, գ. 10, թ. 5, գ. 11, թ. 77, գ. 15, թ. 11։

8 Տե՛ս նույն տեղում, գ. 10, թ. 2, 8, 9, գ. 67, թ. 1, 4, գ. 88, թ. 54, գ. 103, թ. 8։

9 Տե՛ս նույն տեղում, գ. 75, թ. 9։

10 «Խորհրդային Հայաստանը 1920—1925 թթ.», Երևան, 1925, էջ 69։ Տե՛ս նաև ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 33, թ. 38, գ. 75, թ. 4, գ. 76, թ. 9, 17, 18, 859, 91։

11 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 88, թ. 54, գ. 103, թ. 18, գ. 122, թ. 42—44, գ. 128, թ. 38։

12 Տե՛ս «Հայկական ՍՍՌ Ատլաս», Երևան—Մոսկվա, 1961, էջ 59։

տանում բնակչության վերարտադրությունը, արտասահմանից հայրենիք վերադարձող հայության համահավաքի հետ միասին, զուգակցվում էր բնակչության բնական աճի՝ բավական բարձր ծննդի, ապա հետագայում՝ մահացության նվազման հետ։

1920-ական թթ. երկրորդ կեսին հանրապետության բնակչության 1000 շնչի հաշվով ծնվում էր 56—57 երեխա։ Այդ մասին է վկայում ստորև բերվող աղյուսակը։

Բնակչության բնական աճը ՀՍՍՀ-ում 1920—1940 թթ.
(1000 շնչի հաշվով)[13]

տարեթիվը	ծնունդը	մահը	բնական աճը
1923	38,0	12,8	23,2
1925	51,5	16,2	35,3
1930	57,0	17,7	39,3
1935	42,4	12,9	29,5
1940	41,2	13,8	27,4

Բարձր բնական աճի, ինչպես նաև ներգաղթի շնորհիվ, ընդամենը մեկ տասնամյակում, 1930 թ. Սովետական Հայաստանի բնակչությունը հասավ 1 միլիոնի, այսինքն վերականգնվեց 1913 թ. մակարդակը։

Հայկական ՍՍՀ-ում բնակչության 1000 շնչի հաշվով պահպանվում էր ծննդի և բնակչության բնական աճի ամենաբարձր ցուցանիշը, որի շնորհիվ հանրապետությունը նախապատերազմյան տարիներին՝ ընդհուպ մինչև 1941 թ. Սովետական Միությունում բնակչության ամենաբարձր բնական աճ ունեցող հանրապետությունն էր։ 1940 թ. ՀՍՍՀ-ում բնակչության 1000 շնչի հաշվով ծնվում էր 41,2 երեխա և բնական աճով հանրապետությունը ՍՍՀՄ միջին ցուցանիշը գերազանցում էր 14,2, իսկ այդ տեսակետից երկրորդ տեղում ընթացող Ուզբեկստանին՝ 6,8 մարդով։ Եթե մինչև 1920-ական թթ. վերջը բնակչության բնական աճը հիմնականում ապահովվում էր ծննդաբերության ավելացման շնորհիվ, ապա 1940-ական թթ. սկսած բնական աճի գործոն է դառնում նաև մահացության կրճատումը։ Դրա շնորհիվ 1940 թ. հունվարին հանրապետության բնակչությունը հասավ 1 մլն 420 հազար մարդու։

Մեր երկրի բնակչության աճը խաթարվեց հայրենական պատերազմի տարիներին։ ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների հետ միասին պատերազմի արհավիրքներ և ծանր օրեր ապրեց նաև Հայաստանը։ Նրա բնակչության ավելացման թափը խիստ իջավ այն պատճառով, որ ինչպես երկրի բոլոր մասերից, այնպես էլ Հայաստանից երիտասարդությունը մեկնեց ռազմաճակատ։ Դրա հետևանքով պակասեցին նաև ամուսնությունները, նվազեց ծնվող երեխաների բացարձակ թիվը, ավելացավ մինչև մեկ տարեկան երեխաների մահացությունը։

Հայկական ՍՍՀ բնակչությունը իր աճի համեմատաբար բարձր թափը պահպանեց նաև հետպատերազմյան տարիներին։ Ըստ որում հետպատերազմ-

---

13 Տե՛ս «Սովետական Հայաստանը 50 տարում», Երևան, 1970, էջ 36։ ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ. ֆ. 163, ց. 2, գ. 9, թ. 89։

յան տարիներից ի վեր, մինչև օրս, հանրապետության բնակչության վերարտադրության մեջ սահմանագծվում է հիմնականում չորս շրջան:

Առաջինն ընդգրկում է հետպատերազմյան տասնամյակը, երբ բնակչության բնական բարձր աճը ուղեկցվում էր արտասահմանից կատարվող ներգաղթով:

Հետպատերազմյան առաջին տարիներին բնակչության բնական աճը պայմանավորված էր ծնվող երեխաների բացարձակ թվի ավելանալով: Դա բացատրվում էր, նախ, զորացրումով: Հազարավոր նոր ամուսնացած կամ դեռևս չամուսնացած երիտասարդներ մեկնել էին ռազմաճակատ: Ամուսնացածներից շատերը չէին հասցրել երեխաներ ունենալ, կամ քիչ ունեին: Նրանց մի մասին բախտ վիճակվեց վերադառնալ: Դրա շնորհիվ խիստ բարձրացավ ամուսնության գործակիցը և ծնունդը: Պատերազմից հետո ծնվող երեխաների թիվն ավելանում է նաև քիչ երեխաներ ունեցող ընտանիքներում: Միաժամանակ պատերազմից անմիջապես հետո, ընդամենը երկու տարվա (1946—1947 թթ.) ընթացքում Սովետական Հայաստանն ընդունեց և տեղավորեց արտասահմանյան տարբեր երկրներից հայրենիք վերադարձած ավելի քան 80 հազար հայերի:

Երկրորդ շրջանը՝ 1950-ական թթ. կեսերից մինչև 1960-ական թթ. սառաջին տարիներն են: Այս շրջանին բնորոշ էր բնակչության ծննդի և՛ ընդհանուր գործակցի (բնակչության 1000 շնչի հաշվով ծնվողների թիվը), և՛ ծննդաբերության հատուկ գործակցի (տարբեր տարիքային խմբերի յուրաքանչյուր 1000 կնոջ հաշվով ծնված երեխաների թիվը) բարձրանալը: Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ շատ ազգային հանրապետություններում հետպատերազմյան շրջանում դրսևորվեցին մի շարք ընդհանուր միտումներ, որոնք հանգեցրին ծնվող երեխաների բացարձակ թվի անընդհատ ավելացմանը: ՀՍՍՀ-ում ծնվող երեխաների բացարձակ թիվը 1960 թ. հասավ իր ամենաբարձր սահմանին: Այդ տարի Հայկական ՍՍՀ-ում ծնվեց մոտ 75 հազար երեխա: Դա ներկա հարյուրամյակում Հայկական ՍՍՀ այժմյան տարածքում, ինչպես նաև Արևելյան Հայաստանում երբևիցե ծնված երեխաների ամենաբարձր թիվն էր: 1950-ական թթ. վերջերին և 1960-ական թթ. բնակչության աճին նպաստող շատ որոշակի գործոն է դառնում մահացության կրճատումը: 1955 թ. նրպատմամբ մահացության կրճատման շնորհիվ 1965 թ. բնակչության բնական աճը ավելացել էր 3 մարդով:

ՀՍՍՀ բնակչության վերարտադրությանը բնորոշ երրորդ շրջանն ընդգրկում է 1960-ական թթ. կեսերից մինչև 1970-ական թթ. կեսերն ընկած ժամանակահատվածը: Այդ ընթացքում բնակչության բնական աճի կայուն մակարդակի պահպանումը ուղեկցվում է ծննդի նվազումով և մահացությունն իջնելու տեմպերի դանդաղումով: Մահացությունն իջնում է գերազանցապես մանկամահացության շնորհիվ: Իսկ ընդհանուր մահացությունը մինչև 1971 թ. դրսևորում էր աննշան իջնելու և ապա՝ դանդաղ բարձրանալու միտում: Վերը նշված օրինաչափությունների մասին է վկայում ներքոհիշյալ աղյուսակը:

1970-ական թթ. կեսերից, երբ ամուսնության տարիք են թևակոխում 1950-ական թթ. վերջերին, 1960-ականի սկզբներին ծնվածները, աստիճանաբար սկսում է ավելանալ ծնվող երեխաների բացարձակ թիվը: Դրանով ընկրսվում է ՀՍՍՀ բնակչության վերարտադրության չորրորդ շրջանը: Պատերազմների հասցրած տնտեսական վնասները հաղթահարվում են ավելի կարճ

Ծնվածների թիվը, մահացությունը և բնական աճը ՀՍՍՀ-ում (բնակչության 1000 շնչի հաշվով)

տարեթվերը	ծնվածների թիվը	մահացածների թիվը	բնական աճը
1950	32,1	8,5	23,6
1955	38,0	8,8	29,2
1960	40,3	6,8	33,5
1965	29,1	5,8	23,3
1970	22,1	5,2	17,0
1975	22,4	5,5	16,9
1979	22,8	5,6	17,2

ժամանակամիջոցում, քան դեմոգրաֆիականը։ Պատերազմը բնակչության թվի նվազման և հատկապես նրա տարիքային (ինչպես նաև սեռային) կազմի վրա ազդում է ոչ միայն այդ պահին, այլև պարբերաբար և տևականորեն։

1960-ական թթ. առաջին կեսերից ամուսնության տարիք են թևակոխում պատերազմի տարիներին ծնվածները։ Այդ պատճառով իջավ ամուսնության գործակիցը և կրճատվեց ծնվածների բացարձակ թիվը։ Բավական է ասել, որ 1970 թ. 21—29 տարեկան բնակչությունը, 1959 թ. նկատմամբ պակասել էր 17,0 տոկոսով։ Ըստ որում 25—29 տարեկանները պակասել էին 24 տոկոսով, իսկ գյուղական վայրերում՝ 50 տոկոսով[14]։

Բնակչության վերարտադրության մակարդակը պայմանավորված է սոցիալ-տնտեսական, բնաաշխարհագրական, ազգային, կրոնական, կենսաբանական բնույթի և դեմոգրաֆիական ցուցանիշների վրա իրենց կնիքը թողնող այլ գործոններով։

Որոշակի տարբերություն գոյություն ունի երկրի տարբեր տնտեսական շրջանների և առանձին ազգությունների կանանց ծննդաբերության մակարդակների միջև։ Հանրահայտ է, որ դա բացատրվում է տնտեսական շրջանի պատմական ու սոցիալ-տնտեսական պայմաններով, բնակչության զարգացման դեմոգրաֆիական օրինաչափություններով, ազգային և կրոնական առանձնահատկություններով, որոնք դեռևս գոյություն ունեն տարբեր ժողովուրդների մոտ[15]։

Հասարակական զարգացման ներկա պայմաններում ծննդաբերության մակարդակի վրա ազդող գործոններից ավելի ու ավելի որոշիչ են դառնում հասարակական արտադրություն մուտք գործելու համար երիտասարդությանը ներկայացվող հարաճուն պահանջները, կանանց զբաղվածության, ուրբանիզացիայի աստիճանի ու քաղաքային բնակչության տեսակարար կշռի, բնակչության կուլտուր-կրթական մակարդակի բարձրացումը, կենցաղային պայմանների բարելավումը։ Փոքր դեր չեն խաղում նաև բժշկական սպասարկ-

---

14 Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1970 года...», т. II, էջ 67—68։

15 1979 թ. մարդահամարի տվյալներով ՀՍՍՀ-ում տարբեր ազգության պատկանող յուրաքանչյուր կնոջ երեխաների թիվը խստորեն տարբերվում է։

ման բարելավումը, մահացության կրճատումը, ընտանիքի անդամների թվի ներընտանեկան կարգավորման հնարավորությունները, ընտանիքի բյուջեի կազմավորման գործում կնոջ մասնակցության աստիճանը, երեխաների դաստիարակության, խնամքի, ուսուցման նկատմամբ պահանջների աճը և բազմաթիվ այլ գործոններ, որոնք առ այսօր թերևս չեն բացահայտվել դեմոգրաֆիական գրականության կողմից։

Որպես ընդհանուր օրինաչափություն, ծննդաբերության մակարդակը արտադրողական ուժերի զարգացման համեմատ ընդունում է իջնող կորագծի տեսք։ Արտադրության պրոցեսների մասնակի մեքենայացումից ու ավտոմատացումից կոմպլեքսայինին անցումը ուղեկցվում է հասարակական արտադրության նոր ճյուղերի ստեղծմամբ, ուստի նոր և բարդ մասնագիտությունների հանդես գալու հետ։ Հասարակական արտադրություն մուտք գործելու համար աստիճանաբար անբավարար է դառնում միայն ընդհանուր միջնակարգ կրթությունը։ Արտադրության մեջ աստիճանաբար ավելանում է այն մասնագետների թիվը, որոնք նախկինում ուսուցում են ստացել բուհերում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում։ Բնական է, որ գիտելիքների նկատմամբ պահանջարկի մեծացումը պետք է ազդի երիտասարդների ամուսնության տարիքի, ինչպես նաև ամբողջ կյանքի ընթացքում նրանց ունեցած երեխաների թվի վրա։ Դրան նպաստում է նաև հասարակական արտադրության մեջ կանանց մասնակցության անընդհատ ավելացումը։ Վաղ տարիքում ամուսնացող կանայք, որպես կանոն, ավելի շատ երեխաներ են ունենում։ Փաստերը ցույց են տալիս, որ գիտատեխնիկական առաջադիմության և հանրային արտադրության ոլորտի ընդլայնման շնորհիվ Հայկական ՍՍՀ ժողովրդական տնտեսության մեջ կանանց զբաղվածությունը շատ ավելի արագ է ավելանում, քան տղամարդկանցը։

Գիտատեխնիկական առաջադիմությունը ավելի ու ավելի ինտենսիվ է դարձնում ժամանակակից բարդ տեխնիկան ու տեխնոլոգիան տիրապետելու համար աշխատողների վերարտադրման, նոր մասնագիտություն ձեռք բերելու և որակի բարձրացման պրոցեսը։ Կրթական ցենզի բարձրացման համեմատ ավելանում են նաև մարդու մտավոր զարգացման պահանջները։ Իսկ երեխա ունենալու հոգսերը չեն սահմանափակվում միայն ֆիզիոլոգիական արձակուրդով։ Նոր, լրացուցիչ հոգսերը առջևում են։ Մնող մայրը հանրային արտադրության հետ մեկտեղ պետք է մտահոգվի երեխաների ամենօրյա խնամքով, տնային տնտեսությամբ, հասարակական միջավայրից ետ չմնալու և այլ հարցերով։ Այնինչ օրվա սահմանները մնում են 24 ժամ։ Ելքը կանխորոշվում է երեխաների թվի կրճատմամբ։

Այսպիսով, գիտատեխնիկական առաջընթացը հանգեցնում է որոշակի հակասության՝ մի կողմից կանանց անընդհատ աճող և բազմազան նյութակուլտուրական ու ինտելեկտուալ պահանջմունքների բավարարման, ինչպես նաև հանրային արտադրություն մուտք գործելու նպատակով ներկայացվող նոր պահանջների համար անհրաժեշտ ժամանակի, իսկ մյուս կողմից՝ մարդու ժամանակի կայուն բյուջեի միջև։

Հանրային արտադրության ներկայացրած նորանոր պահանջները հանգեցնում են կանանց հիմնական մասի ամուսնության տարիքի հետաձգմանը։ Վաղ ամուսնությունը, որ առայժմ որոշ չափով պահպանվում է հանրապետու-

թյան գլխավորապես գյուղական վայրերում, որպես կանոն, նպաստում է կընոջ ունեցած երեխաների թվի ավելացմանը։ Մինչդեռ հանրային տնտեսության մեջ կնոջ մասնակցությունը և կրթություն ստանալու անհրաժեշտությունը, վերջին հաշվով, նվազեցնում են կնոջ ունեցած երեխաների թիվը։

Կանանց պտղաբերության վրա որոշակիորեն ազդում են նաև նրանց զբաղմունքի բնույթը, բնակության վայրը, սոցիալական դրությունն ու միջավայրը և այլ գործոններ։ Սոցիալական միջավայրը և զբաղմունքի բնույթը որոշակի ներգործություն են ունենում երեխաների միջին թվի վրա։ Այդ պատճառով էլ գյուղական վայրերում կինը, միջին հաշվով, ավելի շատ երեխաներ ունի, քան քաղաքներում։ Բարձր կրթական ցենզ ունեցող մայրերը հիմնականում բնակվում են քաղաքներում։ Եվ չնայած այն բանին, որ կրթական ցածր ցենզ ունեցող մայրերը զբաղված են գերազանցապես ֆիզիկական աշխատանքով, գյուղական վայրերում յուրաքանչյուր մայր միջին հաշվով ավելի երեխա ունի։

Այսպիսով, Հայաստանում երեխաների թվի նվազմանը նպաստող մյուս գործոնը, որ կապված է եղել արտադրողական ուժերի զարգացման հետ, հանրապետության ինդուստրիալ զարգացման շնորհիվ քաղաքային բնակչության ինտենսիվ աճն է։ Ներկայումս քաղաքներում է ապրում հանրապետության բնակչության 67 տոկոսը։ Այդ ցուցանիշներով ՀՍՍՀ-ն միության չորրորդ հանրապետությունն է, մինչդեռ նախասովետական Հայաստանում քաղաքային բնակչությունը հասնում էր ընդհանուրի 10,4, իսկ 1939 թ.՝ 28,6 տոկոսի։

Հայկական ՍՍՀ-ում ծննդի հատուկ գործակիցների նվազումը բացատրվում է նաև բժշկական սպասարկման և ընդհանրապես կենցաղային ու այլ պայմանների բարելավումով։ Դա այլ գործոնների հետ մեկտեղ հանգեցնում է մահացության կրճատմանը։

Հետպատերազմյան շրջանում ՀՍՍՀ բնակչությունը նախկինի նման պահպանեց իր աճի համեմատաբար բարձր թափը։ 1950—1979 թթ. սկզբներին ՀՍՍՀ բնակչությունն ավելացավ 225,0 տոկոսով, իսկ ՍՍՀՄ-ում այն միջին հաշվով կազմեց 147,0 տոկոս։ Բնակչության աճի նման մեծ տարբերությունը բացատրվում է նրանով, որ ՍՍՀՄ եվրոպական մասի հանրապետություններում, Ուրալում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում բնակչության բնական աճի տեմպերը նվազեցին։

1970—1979 թթ. մարդահամարի տվյալներով ՍՍՀՄ բնակչությունը միջին հաշվով 9 տոկոսով ավելանալու պայմաններում, ՌՍՖՍՀ, Ուկրաինական և Բելոռուսական հանրապետություններից յուրաքանչյուրում այն ավելացավ՝ 6, Ուզբեկստանում՝ 30, Ղազախստանում՝ 13, Վրաստանում՝ 7, Ադրբեջանում՝ 18, Լիտվայում՝ 9, Մոլդավիայում՝ 11, Լատվիայում՝ 7, Կիրգիզիայում՝ 20, Տաջիկստանում՝ 31, Հայաստանում՝ 22, Թուրքմենիայում՝ 28, Էստոնիայում՝ 8 տոկոսով։

Ինչպես տեսնում ենք, բնակչության ընդհանուր աճով Հայկական ՍՍՀ-ն զիջել է միայն Ուզբեկական, Թուրքմենական և Տաջիկական հանրապետություններին, իսկ բնական աճի ցուցանիշով՝ միջինասիական հանրապետություններին և Ադրբեջանական ՍՍՀ-ին։ Բնակչության բարձր աճի շնորհիվ 1979 թ. հունվարի մարդահամարի տվյալներով Հայկական ՍՍՀ բնակչությունը կազմեց 3 միլիոն 31 հազար մարդ։ Ներկայումս հանրապետության բնակչության վերարտադրությունը թևակոխում է իր այն փուլը, երբ բնակչության,

մասնավորապես պտղաբերության տարիք թևակոխողների ավելանալու շնորհիվ բարձրանում է ծննդի ընդհանուր գործակիցը, ուստր և ավելանում է ծնվող երեխաների բացարձակ թիվը։

Հայաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո անցած 60 տարում նրա տարածքում բնակչությունն ավելացել է 4,3 անգամ։ Ներկայումս հանրապետությունում բնակվում է 3 մլն 100 հազ մարդ։ Այժմ Սովետական Հայաստանի ավելի քան քառապատկված բնակչության 67 տոկոսը ապրում է քաղաքներում։ Ենթադրվում է, որ 1990 թ. Սովետական Հայաստանում կբնակվի շուրջ 3 950 հազար, իսկ 2000 թ.՝ ավելի քան 4 650 հազար մարդ։

НАСЕЛЕНИЕ АРМЯНСКОЙ ССР ЗА 60 ЛЕТ

Доктор экономич. наук В. Е. ХОДЖАБЕКЯН

(Резюме)

С установлением Советской власти в Армении началась эпоха коренных преобразований в ее социально-экономической и культурной жизни. Развитие народного хозяйства создало благоприятные условия для дальнейшего роста населения. Если в 1920 г. население республики составляло 720 тыс. чел., то в 1980 г. оно достигло 3100 тыс. чел., т. е. увеличилось в 4,3 раза . В статье анализируются основные тенденции естественного и механического роста населения. На фоне выявления общих закономерностей, характерных для воспроизводства населения вообще, выявляются отличительные черты воспроизводства населения Армянской ССР, вскрывается характер причинных связей между уровнем рождаемости и смертности и механическим ростом населения.